ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն
Ширакский центр арменоведческих исследований НАН РА
Shirak Centre of Armenological Studies NAS RA

ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ НАУЧНЫЕ ТРУДЫ SCIENTIFIC WORKS

ՀԱՏՈՐ ВЫПУСК EDITION 28 2025 № 1

ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ETHNOGRAPHY

ՀՏԴ՝ 39
DOI: 10.52971/18294316-2025.28.1-166

ՀԱՅՈՑ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ԱՐԾԱԹՅԱ ՀԱՄԱԼԻՐ ՍՊԱՍՔԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ (ՀԱՊԹ՝ 6144/1-3)

Կարեն Ս. Ասատրյան

Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիր, Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարան, ՀՀ

Ամփոփում

Նախաբան. Հաղորդումն անդրադառնում է Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիր, Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանի (այսուհետ՝ Հայոց ազգագրության թանգարան, ՀԱԹ) «ԹՄ» (Թանկարժեք մետաղ) ֆոնդում պահպանվող 19-20-րդ դդ. կեսերով թվագրվող պարսկական կենցաղային առարկաների համալիրին՝ կազմված հետևյալ առարկաներից՝ սափոր, զույգ բաժակներ, սկուտեղ: Ուսումնասիրությունը նպատակ ունի մշակութաբանական վերլուծության ենթարկել համալիրը և ուսումնասիրող հանրությանը ներկայացնել այն՝ միաժամանակ վեր հանելով համալիրի թանգարանային նշանակությունը*: *Մեթոդներ և նյութեր.* Աշխատանքում օգտագործվել է համեմատական վերլուծության մեթոդը՝ համալիրի պատկերագրությունը և գեղազարդման եղանակները զուգորդելով վաղ ժամանակաշրջանում պատրաստված պարսկական կենցաղային առարկաների հետ: Քննության են առնվել առարկաների պատրաստման տեխնիկա-տեխնոլոգիական առանձնահատկությունները, փորձելով գործնականում ստանալ գեղազարդման նույնատիպ տարրեր՝ ՀԱԹ-ի «ԱԿ»-2 ֆոնդում պահվող աշխատանքային գործիքների հավաքածուում առկա դրվագող գործիքներով: *Վերլուծություն* Զարդանախշերի վերլուծությունը կատարված է կրոնական փիլիսոփայության տեսանկյունից և հիմքում ունի պարսիկ ժողովրդի կրոնական ընկալումները և այդ ընկալումների զուգորդումները՝ արտացոլված պոեզիայում, դեկորատիվ-կիրառական արվեստի այլ առարկաների վրա: *Արդյունքները.* Պատկերագրության վերլուծությունը, տեխնիկա-տեխնոլոգիական առանձ-

* Մինչ այժմ հավաքածուն չի ուսումնասիրվել մշակութաբանական և թանգարանագիտական տեսանկյուններից:

նահատկությունները, սկուտեղի վրա առկա պարսկերեն հարգադրոշմը՝ «۸۴» - «84» և պատրաստող վարպետի դրոշմը՝ «جبر کیارودی» - «Ջաբար Քիառուդի», ցույց են տալիս, որ առարկաները պարսիկ վարպետների ձեռքի աշխատանք են: Առարկաները կրում են դարերի ընթացքում ձևավորված և սերնդեսերունդ փոխանցված պարսկական մետաղամշակության լավագույն ավանդույթները և ներկայացնում են ժամանակի վարպետների հմտություններն ու այն գործածող ժողովրդի գեղագիտական ճաշակը:

Բանալի բառեր՝ *մետաղամշակություն, պարսկական մշակույթ, Ղալամ զանի, կենդանապատկեր, «Վարդ և բլբուլ», Կանսեի ճարտարագիտություն, փորագրազարդում:*

Ինչպես հղել՝ Ասատրյան Կ. *Հայոց ազգագրության թանգարանի արծաթյա համալիր սպասքի բնութագիրը (ՀԱՊԹ՝6144/1-3):* // ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ»: Գյումրի,2025: Հ. 1(28): 166-176 էջեր: DOI: 10.52971/18294316-2025.28.1-166

DESCRIPTION OF THE SILVER TABLEWARE SET OF THE MUSEUM OF ARMENIAN ETHNOGRAPHY (SMAE 6144/1-3)

Karen S. Asatryan

Memorial Complex of Sardarapat Battle,
National Museum of Armenian Ethnography and History of Liberal Struggle, RA

Abstract

Introduction: The paper examines the set of Persian household items dated from the mid. of the 19th to the mid. of the 20th centuries owned in the collection of the Sardarapat Battle Memorial, National Museum of Armenian Ethnography and History of the National Liberation Struggle (hereinafter - the Museum of Armenian Ethnography, MAE). The set consists of a pitcher, a pair of cups, and a tray. The study aims to examine and analyze the set from the culturological point of view and present it to the research community while simultaneously highlighting its museum significance*. *Methods and Materials:* The study uses the method of comparative analysis paralleling the decoration and decorative techniques of the set with Persian household items from earlier periods. The technical and technological characteristics of the objects were examined, attempting to recreate identical decorative elements using engraving tools from the “EL”-2 collection of the MAE. *Analysis:* The analysis of the decorations was done from the point of view of Persian religious philosophy based on the religious perceptions of the Persian people and their reflection in poetry and on other objects of decorative-applied arts. *Results:* The analysis of decorations, technical and technological features, as well as the Persian stamp “۸۴” (84) and the maker’s mark “جبر کیارودی” (Jabar Kiaroudi) on the tray, indicate that the objects are handiworks of Persian masters. The objects embody the finest traditions of the Persian metalwork, developed over centuries and passed through generations, showing the skills of the artisans and the aesthetic taste of the people who used them.

Key words: *metalworking, Persian culture, Ghalamzani, zoomorphic ornament, "The Rose and the Nightingale", Kansei engineering, ornamental engraving.*

Citation: Asatryan K. *Description of the Silver Tableware Set of the Museum of Armenian Ethnography (SMAE 6144/1-3).* // “Scientific works” of SCAS NAS RA. Gyumri, 2025. V. 1(28). 166-176 pp.. DOI: 10.52971/18294316-2025.28.1-166

ՆԱԽԱԲԱՆ. Հայոց ազգագրության թանգարանում (այսուհետ՝ ՀԱԹ) պահպանվում է 19-20-րդ դդ. կեսերով թվագրվող պարսկական կենցաղային առարկաների համալիր (ՀԱՊԹ՝ 6144/1, 6144/2ա, 6144/2բ, 6144/3)՝ կազմված հետևյալ առարկաներից՝ սափոր, բաժակներ, սկուտեղ։

Հոդվածը նպատակ ունի մշակութաբանական վերլուծության ենթարկել համալիրը՝ գիտական լայն հանրությանը ներկայացնելով այն։ Համալիրի մաս կազմող թանգարանային առարկաներն ունեն հարուստ հարդարանք, ձեռք են բերվել մեկ անձից և թանգարանի հավաքածուում դիտարկվում են որպես մեկ ամբողջական համալիր։ Մինչ այժմ հավաքածուն չի լուսաբանվել և չի ուսումնասիրվել մշակութաբանական և թանգարանագիտական տեսանկյուններից։

Պատմա-ազգագրական համառոտ ակնարկ

Մետաղամշակությունը, որպես արհեստագործության կարևորագույն ճյուղ, Պարսկաստանում (Իրանում) զարգացում է ապրել դեռևս վաղ ժամանակներից՝ դառնալով երկրի մշակութային զարգացման անկապտելի մաս։ Դրա զարգացմանը կարելի է հետևել պատմական ժամանակաշրջանների ընթացքում, որոնք թե՛ գեղարվեստական, թե՛ տեխնոլոգիական առումով ի հայտ են բերում և ընդգծում են պարսկական մետաղամշակության առանձնահատկությունները [3, pp. 8, 9, 17-20, 23-26; 15, c. XII-XXII; 5, pp. 639-641]։

Իրանական դիցաբանության մեջ մետաղը սրբազան է և մեծ կարևորություն ունի։ Պարսից մտածողության մեջ մետաղը համարվում է բարության և օրհնության աղբյուր։ Հիմքում ունենալով այս հավատալիքները՝ իրանցիները մետաղի հետ են կապել նաև այնպիսի գոյերի ծագումը, ինչպիսիք են դրախտը, երկիրը և մարդը [1, p. 51]։

Մետաղներից պատրաստված զարդերը, ինչպես նաև դեկորատիվ-կիրառական արվեստի առարկաները, հանդիսանում են ոչ միայն գեղարվեստական ստեղծագործություններ, այլև ժամանակաշրջանի մշակութային, տեխնոլոգիական առանձնահատկությունների և սոցիալական հարաբերությունների արտացոլում [3, pp. 64-77, 105-221, 223-239]։ Յուրաքանչյուր ժամանակաշրջանում պատրաստված մետաղյա արվեստի նմուշները իրենց գոյությամբ փաստում են տվյալ դարաշրջանին բնորոշ գեղագիտական պատկերացումները, արհեստագործության մակարդակը, ինչպես նաև հասարակության սոցիալական և տնտեսական կառուցվածքը։

Ներկայումս արհեստագործության զանազան ճյուղերը շարունակում են պահպանել իրենց ավանդական հիմքերը՝ խարսխված ժողովրդական հմտությունների, դարերի փորձի և վարպետության վրա։ Չնայած տեխնոլոգիական առաջընթացին և մեքենայացված արտադրության լայն տարածմանը՝ ձեռագործ աշխատանքը շարունակում է պահպանել իր բացառիկ տեղը արհեստի (ինչպես նաև արվեստի) աշխարհում՝ արտացոլելով ստեղծագործականությունը, նորարարությունը և կատարողական վարպետությունը։ Ձեռագործ առարկաները վարպետների և սպառողների միջև յուրահատուկ երկխոսության միջոց են։ Դրանք առարկայորեն ներկայացնում են ոչ միայն տվյալ նմուշի գեղարվեստական արժեքը, այլև այն ստեղծող էթնոսի նյութական ու ոչ նյութական ժառանգությունը և փոխանցում են պատմական հիշողություններ, մշակութային ավանդույթներ և գաղափարների գեղարվեստական արտահայտություններ՝ ձևավոր-

ված դարերի ընթացքում: Որոշ մշակութաբաններ ձեռագործ արհեստագործությունը բնորոշում են որպես արվեստ-արդյունաբերություն (Art-Industry), քանի որ այն ոչ միայն արվեստի ձև է, այլև հասարակական ու մշակութային ինքնության պահպանման կարևոր գործոն [7, p. 3]:

ՀԱԹ-ի սպասքի համալիրի ընդհանուր բնութագիր.

պատկերագրություն և տեխնիկա-տեխնոլոգիական առանձնահատկություններ

ՀԱԹ-ի արծաթյա սպասքի համալիրը պարսիկ մետաղագործ վարպետների ձեռքի աշխատանք է: Այդ մասին են փաստում պարսկական մշակույթին բնորոշ գեղազարդումը և տեխնիկա-տեխնոլոգիական առանձնահատկությունները, նաև սկուտեղի վրա առկա պարսկերեն հարգադրոշմը՝ «۸۴» - «84» և պատրաստող վարպետի դրոշմը՝ «جبر کیارودی» - «Ջաբար Քիառուդի»:

Համալիրի մաս կազմող թանգարանային առարկաները աչքի են ընկնում ճոխ բուսանախշ հարդարանքով, կենդանապատկերներով և թռչնապատկերներով: Պարսկական զարդարվեստի գեղարվեստական լուծումների հարցում կարևոր դեր են ունեցել և ունեն կրոնական պատկերացումները: Պարսկական մշակույթը, հետևելով իսլամի շիա ուղղության գաղափարախոսությանը, զերծ է մնացել ազգագրական առարկաների վրա կենդանիների և մարդկանց պատկերման արգելքից, ինչի արդյունքում պարսիկ վարպետները կենդանիների և մարդկանց պատկերագրությունը մեծ կատարելության են հասցրել նաև մետաղամշակության մեջ [12, c. 34]:

ՀԱՊԹ՝ 6144/1 սափորը հարդարված է պարսկական մետաղամշակության լավագույն ավանդույթներով: Այն ունի գնդաձև իրան, գլանաձև պարանոց, կենդանակերպ ձևավոր բռնակ: Սափորի մակերեսը գերազանցապես զարդանախշ է. իրանը բոլորում են չորս զարդաձևեր (մեդալիոններ), որոնց միջև պատկերված է մեկական թռչնապատկեր: Զարդաձևերը հանդիպակաց զույգերով կրկնում են իրար՝ մեկ զույգում պատկերված է թռչնապատկեր, մյուս զույգը իրենից ներկայացնում է մեկ ամբողջություն կազմող ռճավորված խոշոր վարդածաղիկ: Դիմահայաց կամ պրոֆիլից դիտելիս տեսանելի է միայն զարդապատկերներից մեկը, ինչը ստեղծում է տպավորություն, թե գործ ունենք երկու տարբեր առարկայի հետ [Նկար 1]: Նույն սկզբունքով է հարդարված նաև պարանոցը: Պրոֆիլից՝ վարդածաղկի կողմից այն հարդարված է խիտ դասավորված ծաղկապատկերներով, դիմահայաց՝ թռչնապատկերի կողմից հարդարված է անզարդ շեղանկյունաձև մեդալիոնով, որը պարունակում է ավելի համեստ ռճավորմամբ գծայնացված մեկ ծաղկապատկեր: Դարձյալ տպավորությունը, որ, կարծես, գործ ունենք երկու տարբեր առարկաների հետ, ակնհայտ է [Նկար 2]: Իրանից պարանոց անցման հատվածը հարդարված է բուսածաղկանախշ չորս խորանաձև սրագագաթ զարդաձևերով, որոնց գագաթներից դուրս է գալիս մեկական հովհարաձև բուսանախշ: Նրանց միջև ընկած հատվածն անզարդ է: Սափորն ունի կենդանակերպ բռնակ՝ կես վիշապ-կես օձ. թեփուկավոր վիշապի երախից դուրս է խոյանում օձը [Նկար 3]: Վիշապակերպ ձևավորմամբ բռնակների հիանալի օրինակների ենք հանդիպում Աքեմենյանների և Սասանյանների ժամանակաշրջանում պատրաստված սափորների վրա, որոնց բռնակի երկու ծայրերը, իսկ որոշ դեպքերում՝ բռնակն ամբողջությամբ, կենդա-

նակերպ է [3, pp. 45, 194, 199; 15, cc. 49, 71, 73], ինչպես նաև՝ հետագայում՝ XV-XVII դդ. պատրաստված ոչ թանկարժեք մետաղյա կենցաղային առարկաների վրա [13, cc. 106, 107, 194-199]:

Իրանի զույգ զարդաձևերում թռչնապատկերը հիշեցնում է աքաղաղ (cock-rooster/chicken): Ավեստայում «Kherous» արմատից ածանցված «աքաղաղ» բառը նշանակում է «գոչյուն» կամ «բարձրաձայն կանչ» [1, p. 53]: Նախաիսլամական դարաշրջանում աքաղաղի խորհրդանիշը զուգորդվում էր բարու և չարի գաղափարների հետ: Մարդիկ հավատում էին, որ աքաղաղը վանում է դևերին ու չար ոգիներին, այդ պատճառով հաճախ էին պահում այս թռչնին իրենց տներում [8, pp. 104-121; 2, pp. 15, 16]:

Ամիր Հոսեին Չիթսազիանը /Amir Hossein Chitsazian/ և Ֆորոուզան Դավուդին /Forouzan Davoudi/ իրենց համահեղինակային՝ «Աքաղաղի խորհրդանշական դիրքը իրանական մշակույթում և արվեստում՝ հիմնված խեցեղենի, մետաղագործության և տեքստիլի վրա» /The symbolic position of the rooster in Iranian culture and art based on pottery, metal and textiles/ աշխատության մեջ հանգամանորեն խոսում են աքաղաղի պատկերագրության տարածվածության սահմանների և իմաստաբանության վերաբերյալ՝ ինչպես նախաիսլամական շրջանում, այնպես էլ դրանից հետո [2, pp. 13-20]: Երբ լուսաբացին մարդիկ արթնանում են աքաղաղի կանչով, պետք է գործեն ըստ երեք կարևոր սկզբունքների՝ բարի մտքեր, բարի խոսքեր, բարի գործեր և խուսափեն՝ չար մտքերից, չար խոսքերից և չար արարքներից: Աքաղաղից հետո հաջորդ կարևորություն ունեցողը տան օջախն էր, որը ընտանիքի անդամներին հորդորում էր փոխել գիշերային հագուստը, լվանալ ձեռքերը և վառել կրակը: Այսպիսով աքաղաղի ձայնը և տան օջախի կրակը կոչ են անում ընտանիքի անդամներին վաղ արթնանալ, խուսափել չափազանց երկար քնելուց, վանել ծուլության դևին և զբաղվել աշխատանքով [8, pp. 105-107]:

Խոշոր վարդածաղիկ ներկայացնող զարդաձևերը երկու կողմում ունեն մեկական թռչնապատկեր, և համատեղ դիտարկելիս թեմատիկ մոտիվը հիշեցնում է պարսկական բանահյուսության և գրականության մեջ հայտնի «Վարդ և բլբուլ» («gol o bolbol»/ բլբուլի /بلبل – bolbol – bulbul – boulboul) սյուժեն [Նկար 1]: Բլբուլի և վարդի փոխաբերական զուգադրումը խորապես արմատացած է պարսկական պոեզիայում և մշակութային պատկերացումներում: Պարսիկ լեզվաբաններն ու բանաստեղծները բլբուլ և մի քանի այլ անուններով թռչուններին ընկալում են իբրև մեկ թռչուն, որը բնութագրվում է իր քաղցր (ḵᵛoš) կամ տխուր (zār) երգով: Այն հաճախ նույնացվել է սիրահարի հետ, որ երգում է իր սիրեցյալի՝ վարդի (gol) համար: Բլբուլի բազմաթիվ պոետիկ անվանումները կամ մակդիրները արտացոլում են նրա վարքագծային առանձնահատկությունները: Օրինակ՝ բլբուլին «hazār-dāstān» («հազար») անունով կոչելիս, շեշտում էին թռչնի երգելու զարմանալի վարպետությունը: Պարսկական գրականության մեջ բլբուլին հաճախ անվանում էին «գիշերային երգիչ» (morḡ-e šabḵᵛān), «արշալույսի թռչուն» (morḡ-e saḥar կամ bolbol-e saḥarī): Բլբուլի երգի և դրա սիրային խորհրդաբանության վերաբերյալ բազմաթիվ բանաստեղծական պատումները վերագրել են նրան տխուր և թախծոտ սիրահարի կերպար, որը տառապում է իր սիրեցյալից՝ վարդից բաժանվելուց: Բլբուլը հաճախ ներկայացվում է որպես

սիրուց խելագարված (šeydā), տառապող (ʿāšeq-e zār), անքուն, երբեմն էլ «խմած» (mast), ինչը վերաբերում է ոչ թե գինուն, այլ սիրո խենթությանը [11]։

Ինչպես տեսնում ենք, վարդի և բլբուլի փոխհարաբերությունը կապված է սիրո, կարոտի ու տառապանքի հետ, և այն հանդես է գալիս առավել աշխարհիկ և փիլիսոփայական տեսանկյունից։

Սափորի մակերեսի նախշազարդման համար որպես հետնապատկեր /ֆոն/, օգտագործվել է կետանախշ մակերես, որն ստացվել է դրվագման եղանակով։ Կետանախշումը կատարվել է դրվագող գործիքով, որի բանող մասն ունի գնդաձև ներս ընկած փոսիկներ, որոնք սովորաբար կազմված են հինգ, վեց և ավելի հատերից [Նկար 4]։ Նմանատիպ դրվագող գործիքների ենք հանդիպում ՀԱԹ-ում պահպանվող Չիֆթալարյանների մետաղագործական հավաքածուում*, որոնց կիրառման արդյունքում ընդգծվում է առարկաների ֆոնը և դրանց գեղարվեստական արժեքը [Նկար 5, 6, 7]։ Ասվածը պատկերավոր ներկայացնելու նպատակով փորձ է արվել կավամոմային զանգվածի (պլաստիլինի) վրա վերարտադրել նմանատիպ մակերես՝ օգտագործելով ՀԱԹ-ի «ԱԿ-2» ֆոնդում պահվող տոհմիկ զինագործ Չիֆթալարյանների կիրառած դրվագող գործիքները։ Այս գործիքները նախկինում օգտագործվել են զենքերի և զարդերի համար ֆոն ստեղծելու նպատակով։ Թեև զարդանախշերի բնույթը որոշակիորեն տարբերվում է (այս դեպքում գնդաձև ելուստներն ուղղված են դեպի դուրս), գործիքների կիրառման տեխնիկան նույնն է։ Ստացված արդյունքները վկայում են, որ պարսկական համալիրի առարկաների մակերեսի ֆոնը նույնպես ստեղծվել է նմանատիպ մեթոդով՝ ընդգծելով գործիքների և դրանց օգտագործման ընդհանրությունները։

Զարդանախշման այս ձևը բավականին խորը արմատներ ունի։ Դրա նմանատիպ օրինակների ենք հանդիպում իրանական մշակույթի տարբեր ժամանակաշրջաններում պատրաստված առարկաների վրա, ինչը կիրառվել է առարկայի մակերեսի նախշազարդման համար, թե՛ որպես հետնապատկեր, թե՛ պատկերի որոշ հատվածների ընդգծման և նրանք առավել արտահայտիչ դարձնելու համար [15, cc. 7, 8, 10, 13, 14, 17-19, 51-54; 3, p. 123] [Նկար 8]։

Սափորի մակերեսի վրա նկատելի են նաև օղականախշեր, որոնցից համապատասխան դասավորվածության դրվագմամբ ստացվել են ծաղկանախշեր։ Վերջիններս արված են շատ պարզ, դյուրին տեխնիկայով և կոչված են մակերեսի ազատ հատվածներն ընդգծելուն։ Օղականախշերի պատկերման համար նախատեսված դրվագման գործիքների օրինակների դարձյալ հանդիպում ենք Չիֆթալարյանների հավաքածուի դրվագող գործիքներում։ Այս դեպքում տարբերությունը չափսերի մեջ է [Նկար 9]։

Օղականախշը՝ որպես գեղազարդման եղանակ, այս դեպքում նույնպես հանդիպում է իրանական մշակույթի տարբեր ժամանակաշրջաններում պատրաստված առարկաների վրա։ Այս տարրերը կիրառվել են պատկերի որոշ հատվածների ընդգծման և առավել արտահայտիչ դարձնելու նպատակով [15, cc. 7, 16, 33; 3, pp. 108, 161-163.] [Նկար 10]։

* ՀԱՊԹ՝ 6824/1290, 6824/823, 6824/996, 6824/1017, 6824/1149, 6824/1177, 6824/1290, 6824/1317, 6824/1438։

Խիտ փորագրազարդ հարուստ բուսանախշերով և կենդանա-թռչնապատկերներով են գեղազարդված ՀԱՊԹ՝ 6144/2ա, 6144/2բ բաժակները: Կլոր շրջանակների մեջ զույգերով պատկերված են նապաստակներ, աղվեսներ, եղնիկներ, ոչխարներ, արագիլներ: Կենդանապատկերները խիստ բնորոշ են պարսկական զարդարվեստին և հանդիպում են տարբեր ժամանակաշրջաններում պատրաստված առարկաների վրա [նկար 11, 12]: Բաժակների գեղազարդումը կատարվել է գերազանցապես փորագրմամբ՝ մետաղի հեռացման միջոցով (Engraving through metal removing): Այս տեխնիկայով մետաղի որոշ հատվածներ հեռացվում են պողպատե գործիքով, որով իրականացվում է ճնշում գործադրելու միջոցով մետաղաշերտի սեղմում-հեռացում: Փորագրության այս տեխնիկան համարվում է առանց մուրճի կիրառման փորագրության տեխնիկաներից ամենահինը [21]:

ՀԱՊԹ 6144/3 սկուտեղը էլիպսաձև է՝ նեղացող ծայրերում ուղիղ կտրվածքով: Ունի բուսածաղկանախշ հարդարանք: Կենտրոնում պատկերված է բուսածաղկանախշ մեդալիոն, որի երկու կողմերից դուրս են գալիս իրար հաջորդող երեքական ծաղկանախշեր՝ արմավազարդեր, որոնցից երկրորդները առնված են գալարուն վարդակի մեջ: Ունի երկու եզրագոտի: Արտաքին եզրագոտին կազմված է կես-ծաղկանախշերով: Սրան հաջորդում է ծաղիկ-տերևանախշ-ծաղիկ հերթագայությամբ շղթա կազմող շրջագոտին: Կենտրոնական մեդալիոնը բոլորում են չորս կողմում պատկերված, իրար հակադիր զույգ թռչնապատկերները (հավանաբար՝ փասիաններ): Ինչպես նշում են Զ. Հակոբյանը և Լ.Միքայելյանը իրենց՝ «Սենմուրվը և մյուս առասպելական արարածները Սասանյան պատկերագրությամբ Հայաստանի և Անդրկովկասի միջնադարյան արվեստում»/“The senmurv and Other Mythical Creatures with Sasanian Iconography in the Medieval Art of Armenia and Transcaucasia”/ աշխատությունում, «զրադաշտականության մեջ, ի թիվս այլ թռչունների, փասիանը համարվում էր բարերարության և աստվածության խորհրդանիշ» [4, p. 51; 14, c. 65]: Թռչունները ներկայացված են ռեալիստորեն, սակայն խիստ ներդաշնակ են ընդհանուր գեղահարդարմանը և կարծես հանդես են գալիս որպես զարդապատկեր:

Սկուտեղի զարդանախշումը հիշեցնում է պարսկական գորգերի հարդարանքը [10, p. 16], իսկ բուսածաղկային հորինվածքները և թռչնապատկերները պարսկական զարդարվեստին ինքնատիպություն հաղորդող տարրերից են [10, p. 13] [Նկար 13, 14]:

Համալիրի առարկաների վրա զարդանախշերը պատրաստված են իրանական արվեստում հայտնի «ղալամ զանի» (Ghalam Zani – գրչով փորագրում) եղանակով՝ մետաղամշակության փորագրման հատուկ արվեստով: «Ղալամ զանի»-ն այն եղանակն է, որն ընդգրկում է տարբեր մետաղների վրա նմուշներ և դետալներ փորագրելու գործընթացը: Այս ավանդույթների պահպանման ու զարգացման գործում մեծ դեր են խաղացել վարպետներ Օստադ Մոհամմադ Օրայզին և Օստադ Մոհամմադ Թաղի Զուֆանին [6, pp. 206, 207]: Նրանց աշխատանքները ոչ միայն հարստացրել են այս արվեստը, այլև ոգեշնչել են նոր վարպետների՝ խթանելով արտադրանքի որակն ու բազմազանությունը:

Պարսկական փորագրազարդ իրերը լայն ճանաչում ունեն ոչ միայն տեղացիների, այլև զբոսաշրջիկների շրջանում՝ դիտարկվելով որպես մշակութային հուշանվերներ: Այս հետաքրքրության աճի հետ մեկտեղ՝ դիզայներներն սկսեցին կիրառել «Kansei engineering»

[9, p. 289; 7, pp. 1-9] մեթոդը, որը դիզայնի միջոցով ստեղծում է հույզեր արթնացնող արտադրանք՝ ավելի խորությամբ արձագանքելով սպառողների ակնկալիքներին։

Իրանի շուկաներում կարելի է գտնել տարատեսակ կենցաղային սպասք և պարագաներ, որոնք պատրաստված են ինչպես թանկարժեք, այնպես էլ ոչ թանկարժեք մետաղներից։ Դրանք առանձնանում են ավանդական արհեստագործական տեխնիկաներով, որոնք արտացոլում են պարսկական մշակույթի հարուստ ժառանգությունը։ Եվ, չնայած ժամանակի ընթացքում տեղի ունեցող փոփոխություններին՝ Իրանը շարունակում է պահպանել իր մշակութային ինքնությունն արտացոլող արվեստը։ Ավանդական նախշերն ու զարդանկարները գրեթե անփոփոխ են մնացել դարերի ընթացքում՝ շարունակելով հետաքրքրել տեղական ու միջազգային գնորդներին [17; 18; 19; 20]։

Որոշ նմուշներ ձեռք են բերել ոչ միայն գործնական, այլև մշակութային արժեք՝ ընդգրկվելով կոլեկցիոներների հավաքածուներում։ Այս իրերը մեծ պահանջարկ ունեն միջազգային աճուրդներում, այդ թվում՝ Niemczyk, Casa d'aste Capitolium Art, Christie's, Chiswick auctions և այլ հարթակներում, որտեղ իրանական արվեստի նկատմամբ հետաքրքրությունը տարեցտարի աճում է [16]։

Այսպիսով, Իրանում դարերի ընթացքում ձևավորված արհեստագործական մշակույթը շարունակում է զարգանալ՝ պահպանելով իր գեղարվեստական և մշակութային նշանակությունը։

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ. Պարսկական մշակույթը նույնիսկ նոր ժամանակներում շարունակում է առանձնանալ իր ազգային և ավանդական արժեքները պահպանելու ձգտումով։ Այս միտումը արտացոլվում է տարբեր արհեստների մեջ, այդ թվում՝ մետաղամշակության։

Պարսիկ վարպետները դարերի ընթացքում ձևավորված տեխնիկա-տեխնոլոգիական եղանակները շարունակում են կիրառել և կատարելագործել՝ ստեղծելով դեկորատիվ-կիրառական արվեստի ինքնատիպ ու բացառիկ նմուշներ։ Այս ավանդույթների պահպանման վառ օրինակ է ՀԱԹ-ի դիտարկվող պարսկական համալիրը, որը մարմնավորում է պարսկական մետաղամշակության լավագույն ավանդույթները։

Նկար 1.
ՀԱՊԹ 6144/1

Նկար 2.
ՀԱՊԹ 6144/1

Նկար 3.
ՀԱՊԹ 6144/1

Նկար 4. ՀԱՊԹ 6144/1



Նկար 8. Орбели, стр. 51.

Նկար 5.
ՀԱՊԹ 6824/996

Նկար 6.
ՀԱՊԹ 6824/1438

Նկար 7.
ՀԱՊԹ 6824/1177

Նկար 9.
ՀԱՊԹ 6824/1017



Նկար 10.
Орбели, стр. 7.

Նկար 11.
ՀԱՊԹ 6144/2ա

Նկար 12.
ՀԱՊԹ 6144/2բ



Նկար 13. Yassavoli D. Persian rugs and carpets, 1993, p. 16

Նկար 14.
ՀԱՊԹ 6144/3

Գ ր ա կ ա ն ո ւ թ յ ո ւ ն

1. **Alami A., Yousef Jamali M., Jadidi N.** *Study of Sacred Animals' Bas-relief in Sassanid Metal Works Art in Mazandaran* // Intl. J. Humanities. 2017. V. 24 (3). 49-66 pp..
2. **Chitsazian H., Davoudi F.** *The symbolic position of the rooster in Iranian culture and art based on pottery, metal and textiles* // Journal of Art Faculty, Shahid Chamran University of Ahvaz. 2020. V. 9. Issue 19. 13-20 pp..
3. **Gunter A., Jett P.** *Ancient Iranian metalwork in the Arthur M. Sackler Gallery and the Freer Gallery of Art.* Washington. Smithsonian Institution. 1992, 271 p..
4. **Hakobyan Z., Mikayelyan L**. *The senmurv and Other Mythical Creatures with Sasanian Iconography in the Medieval Art of Armenia and Transcaucasia* // Fabulous Creatures and Spirits in Ancient Iranian Culture. 2018. 39-75 pp..
5. **Ivanov A.** *Applied arts: Metalwork, ceramics and sculpture* // History of Civilizations of Central Asia. 2003. V. V. 621-648 pp..
6. **Karamian G.** *Historical Metal works named Warsaw in Iran*//Historiai Świat. 2020. Tom 9.205-218 pp..
7. **Karimi M., Fard Y., Zafarmand S.** *Kansei engineering as an ergonomic and technological concept derived from customer's preference about a product case study Iranian handicraft* // International confe-

rence on kansei engineering and emotion research 2010. Keer2010. Paris | March 2-4, 2010. 615-621 pp.. (https://www.keer.org/keer2010/Papers/0615.pdf)
8. **Modi J.** *The Cock as a sacred Bird in ancient Iran* // *Anthropological Papers: Papers read before the Anthropological Society of Bombay.* 1911. 104-121 pp..
9. **Nagamachi M.** *Kansei Engineering as an ergonomic consumer-oriented technology for product development* // Applied Ergonomics. 2002. V. 33: Issue 3. 289-294 pp..
10. **Yassavoli D.** *Persian rugs and carpets*. Tehran. Printed by Aban Press Ltd. 1993. 104 p.
11. **Hūšang Aʿlam, Jerome W. Clinton, Bolbol** "Nightingale". https://www.iranicaonline.org/articles/bolbol-nightingale (դիտվել է 08.01.2025).
12. **Арманд Т.** *Орнаментация ткани*. Москва-Ленинград: "Academia". 1931. 206 с..
13. **Иванов А**. *Медные и бронзовые (латунные) изделия Ирана второй половины XIV — середины XVIII века.* СПб.: Изд-во Гос. Эрмитажа. 2014. 304 с..
14. **Микаелян Л.** *Мотив лент и ожерелий в средневековой скульптуре Армении и в искусстве Сасанидского Ирана*//Исследования по искусству Византийского мира: Сборник статей. 2013. Т. VII. 64-72сс.
15. **Орбели И., Тревер К.** *Сасанидский металл. Художественные изделия из золота, серебра и бронзы.* М.-Л.: "Academia". 1935. XLVIII с. + 85 табл..
16. https://www.chiswickauctions.co.uk/auction/search/?st=persian%20silver&c=1 (դիտվել է 11.01.2025).
17. https://www.instagram.com/antique_roben/. (դիտվել է 05.02.2025).
18. https://www.instagram.com/mehdi_dehghani.hezar_dastan/ (դիտվել է 05.02.2025).
19. https://www.instagram.com/ahmad2024812/ (դիտվել է 07.02.2025).
20. https://www.instagram.com/aliqapu.handicrafts/ (դիտվել է 08.02.2025).
21. https://persianhandicrafts.com/what-is-ghalamzani (դիտվել է 09.02.2025).

R e f e r a n c e s

1. – 11. (տե՛ս գրականություն)
12. **Armand T.** "*Ornamentation of Fabric*". [*Ornamentacija tkani*] Moscow-Leningrad: "Academia"Publ, 1931, 206 p.. (in Russian)
13. **Ivanov A.** "Copper and Bronze (Brass) Artifacts of Iran from the Second Half of the 14th to the Mid-18th Century" [*Mednye i bronzovye (latunnye) izdelija Irana vtoroj poloviny XIV — serediny XVIII veka*]. SPb.: The State Hermitage Publ.House. 2014. 304 p.. (in Russian)
14. **Mikayelyan L.** "The Motif of Ribbons and Necklaces in Medieval Armenian Sculpture and Sasanian Iranian Art" [*Motiv lent i ozherelij v srednevekovoj skul'pture Armenii i v iskusstve Sasanidskogo Irana*] // *Through Ornament: Studies in the Art of the Byzantine World: Collection of Articles*. 2013, V. 7, 64-72 pp. (in Russian)
15. **Orbeli I., Trever K.** *Sasanian Metalwork. Artistic Objects Made of Gold, Silver, and Bronze.* [*Sasanidskij metall. Hudozhestvennye izdelija iz zolota, serebra i bronzy*] Moscow-Leningrad: "Academia", 1935, XLVIII p. + 85 plates. (in Russian)
16. – 21. **(տե՛ս գրականություն)**

Ընդունվել է / Received on: **24. 03. 2025**
Գրախոսվել է / Reviewed on: **04. 04. 2025**
Հանձնվել է տպ. / Accepted for Pub: 23**. 05. 2025**

Տեղեկություններ հեղինակի մասին

Կարեն Սաշայի ԱՍԱՏՐՅԱՆ՝ «Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիր, Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության թանգարան», ՀՀ, էլ. հասցե՝sardarapat01.22@gmail.com // orsid / com0009-0005-4493-4088

Karen Sasha ASATRYAN: Researcher, Memorial Complex of Sardarapat Battle, National Museum of Armenian Ethnography and History of Liberal Struggle, RA, e-mail: sardarapat01.22@gmail.com // orsid com/0009-0005-4493-4088.